



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱԺՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԵԼՍԻՆԿԻՈՒՄ

Հուլիսի 10—15 օրերին, Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում, նումարվեց խաղաղության, ազգային անկախության և զինաթափման համաշխարհային կոնգրեսը, երկրագնդի 98 երկրների 1470 պատգամավորների մասնակցությամբ:

Մասնավոր հրավերի վրա, Հայաստանյայց եկեղեցու պատգամավորությանն անձամբ բարեհաճել էր գլխավորել Վեհափառ Հայրապետը: Նորին Ս. Օծուխյան ընկերակցում էին նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարզե եպիսկոպոս Գևորգյանը և գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը:

Հուլիսի 9-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով Մոսկվայից մեկնում է Հելսինկի:

Հելսինկիի խաղաղության կոնգրեսը գումարվում էր այն պահին, երբ երկրագնդի մի շարք երկրներում միջազգային իրադրությունը զգալիորեն սրվել էր և խաղաղությունը լրջորեն վտանգվել, որով էլ ավելի հրամայական էր դառնում խաղաղության օգտին հանդես եկող քրիստոնեական եկեղեցիների, կրոնական այլ դավանությունների, հասարակական կազմակերպությունների և մարդկության ճակատագրի համար պատասխանատու բարի կամքի տեր բոլոր ուժերի միասնության ամրապնդումը՝ դատապարտելու պատերազմը և կանխելու նոր արյունահեղություններ ու թշվառություններ:

Այս առումով, Հելսինկիի խաղաղության կոնգրեսը իր արժանի ավանդը մուծեց խաղաղության պաշտպանության գործում:

Կոնգրեսը բացվում է հանդիսավորապես հուլիսի 10-ին, առավոտյան ժամը 9-ին, ֆիննական մայրաքաղաքի «Կուլտուրայի տան» մեծ դահլիճում:

Ժողովասրահը զարդարված էր մասնակից երկրների ազգային դրոշակներով:

Պատգամավորներն ու հյուրերը ջերմորեն ողջունում են Ֆինլանդիայի պետության ղեկավար, նախագահ Ուրիսո Կ. Կեկոնենի ժամանումը:

Կոնգրեսի բացումը կատարում է Ֆինլանդիայի ազգային նախապատրաստական կոմիտեի նախագահ, պառլամենտի անդամ Վ. Սվինխուվուդը:

Ֆինլանդիայի կառավարության անունից կոնգրեսի պատգամավորներին ողջունում է վարչապետ Ի. Վիրտալանեն:

Այնուհետև ներածական խոսքով հանդես է գալիս խաղաղության համաշխարհային խորհրդի նախագահ պրոֆ. Զոն Բեռնալը:

Կարճատև ընդմիջումից հետո, կոնգրեսի պատգամավորները լսում են նախապատրաստական կոմիտեի ղեկուցումը կոնգրեսի աշխատանքի կարգի մասին:

Հուլիսի 10-ի և 11-ի պլենար նիստերում կոնգրեսը շարունակում է իր աշխատանքները: Լսվում են շուրջ 14 ղեկուցումներ:

Հուլիսի 11-ի առավոտյան նիստում հրապարակվում են ողջույնի հեռագրերն և ուղերձները ՍՍՌՄ Միևիստների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինի, Զխոսլովակիայի Սոցիալիստական Ռեսպուբլիկայի նախագահ Ա. Նովոտնու, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության Պետական խորհրդի նախագահ Վ. Ուլբրիխտի և ուրիշների:

Հուլիսի 12-ին, կոնգրեսի բոլոր անդամները բաժանվում են 7 առանձին հանձնաժողովների, օրակարգում դրված հարցերը ուսումնասիրելու, քննելու, վիճելու և ընդհանուր ժողովին բերելու եզրակացություններ և բանաձևեր:

Ծնթաժողովներում քննության էին դրված հետևյալ հարցերը.

1-ին հանձնաժողով
Նյութ՝ Վիետնամ:

2-րդ հանձնաժողով

Նյութեր՝ Դեռևս դադարեցրած լուծի առկա գտնվող ժողովուրդների ազատագրում, ազգային վեհաժողովության պահպանում և վերջինիս պաշտպանությունը ընդդեմ ամեն ոտնձգության:

3-րդ հանձնաժողով

Նյութեր՝ Արգելում միջուկային զենքերի, հրթիռակիր ընդծովյանների փորձերի, միջուկային տարածման՝ ներառյալ բազմակողմանի և բազմազգ զորքերը, միջուկային սահունցում, միջուկային զենքերի պահեստների և կառքերի ոչնչացում:— Միջուկազենք գոտիներ և մասնակի զինաթափման այլ միջոցներ, օտար բանակների և զինվորական խարխիսների, զինվորական դաշինքների և բլոկների վերացում, ընդհանուր զինաթափման դաշինք:

4-րդ հանձնաժողով

Նյութ՝ Համաշխարհային երկրորդ պատերազմի հետքերի հաշվահարդար, եվրոպական անվտանգություն, զբաղեցրում, խաղաղության դաշինքները, գերմանական հարցը և այլ խնդիրներ, ինչպես Օկինավայի վերագործը ճապոնիային:

5-րդ հանձնաժողով

Նյութ՝ Ազգերի տնտեսական վեհաժողովություն. ազատություն նրանց համար՝ որոշելու տնտեսական և առևտրական դարգացման իրենց հատուկ կերպը և միջազգային համագործակցություն:

6-րդ հանձնաժողով

Նյութ՝ Զինարշավի հասարակական և տնտեսական հետևանքները. պատերազմական արդյունաբերության վերափոխումը խաղաղության արդյունաբերության:

7-րդ հանձնաժողով

Նյութեր՝ Խաղաղության նպաստավոր մթնոլորտի ստեղծում: Մշակույթի, կրոնի և դաստիարակության դերը ի սպաս խաղաղության. խաղաղության կազմակերպությունների գործարար համագործակցությունը:— ՄԱԿ-ի համաշխարհայնությունը, միջազգային օրգանիզմների կառուցվածքի և աշխատանքի բարեփոխումը:

Հայ Եկեղեցու պատգամավորությունը մասնակցում է 7-րդ ենթաժողովի աշխատանքներին:

Հուլիսի 12-ին, 7-րդ ենթաժողովի առավոտյան նիստում, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, հանդես է գալիս Վեհապառ Հայրապետը հետևյալ գրավոր ճառով.

«Հանուն Հայաստանյայց Եկեղեցու, Մենք կողջունենք Հելսինկիի խաղաղության համաժողովը և կարտահայտենք Մեր համոզումը, որ

այս ժողովը պատմական հանգրվան մը պիտի ըլլա խաղաղության համար մղված պայքարի և համայն աշխարհի խաղաղասեր ուժերու ամրապնդման ճամբուն վրա:

Մեր փորձառությունը կապացուցանե, որ ինչքան ժամանակը սահի, այնքան ժողովուրդներու կամքը խաղաղության համար ավելի ու ավելի հստակ և հաստատուն կդառնա:

Հայ ժողովուրդը ևս բուն փափագով մը կսպասե խաղաղության դատին վերջնական հաղթանակին, որովհետև իր հապարայա պատմության ընթացքին ան միշտ պատերազմներու վրի է դարձած:

Մեր ժողովուրդի հիշողության մեջ ընդմիշտ դրոշմված է Արևմտյան Հայաստանի մարտիրոսագրությունը համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին, երբ գրեթե երկու միլիոն քրիստոնյա հայեր կոտորվեցան օսմանյան կառավարության հրամանով:

Այսօր, երբ մարդու իմացության հանճարը տիեզերքը կհաղթահարե, պետք է հուսալ, որ հեռու չէ այն օրը, երբ աշխարհը պիտի ողջունե նաև մարդու բարոյական հանճարի հաղթանակը: Եվ այս հաղթանակի գերագույն արտահայտությունը պիտի ըլլա խաղաղության վերջնական ամրապնդումը մեր մոլորակի վրա, այն խաղաղության, կոր մեզ ավետեր էր հրեշտակներու երգը, դարեր առաջ. «Յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճութիւն»:

Այս համագումարը հրավիրված է քննարկելու համար խաղաղության հարցի բոլոր երեսները, համաշխարհային ներկա պայմաններուն մեջ:

Առաջին հերթին, անկասկած, պետք է կասեցնել արյունոտ պատերազմի կրակը Վիետնամի մեջ, որտեղ կզոհվի անմեղ ժողովուրդը, և պետք է կարգավորել Վիետնամական խնդիրները խաղաղ միջոցներով, Վիետնամի ժողովուրդի իսկ ապատ կամքով:

Բայց Մենք կհավատանք, որ աշխարհին ապահովելու համար շարունակական և տևական խաղաղություն մը, պետք է կապմը ընդարձակ և ծավալուն ծրագրեր, դաստիարակելու համար մարդիկը և աճող սերունդը՝ խաղաղության և բարի կամեցողության ոգիով, որպեսզի պատերազմները անկարելի ըլլան ապագային:

Մարդկային կյանքին մեջ վճռական դերը կպատկանի միշտ իրեն՝ մարդուն, անոր խղճին, անոր կամքին և անոր գործունեության:

Եթե կարենայինք այս փոփոխությունը կատարել մարդու հոգիին մեջ, մենք կկարողանայինք ոչնչացնել չարիքի արմատները:

Դաստիարակության համաշխարհային նման ծրագրի մը իրագործումը անշուշտ պիտի ունենա իր արդյունքը և պիտի ստեղծե խաղաղու-

թյան համար նպաստավոր մթնոլորտ մը մարդկային կյանքին մեջ:

Եթե հոգևորականները, եկեղեցիները, դաստիարակները, գործները, գիտնականները և արվեստի մարդիկ նվիրվին այս սուրբ և մարդասիրական գործին, Մենք վստահ ենք, որ կունենանք դրական արդյունքներ:

Որպես Պետք քրիստոնյա հին եկեղեցիներեն մեկուն, Մենք այստեղ կուզենք ընդգծել այն կարևոր դերը, որ կրնա խաղալ Եկեղեցին՝ ստեղծելու համար խաղաղության այս մթնոլորտը:

Քրիստոնեությունը էապես սիրո և խաղաղության առաքելություն մըն էր մարդոց աշխարհին մեջ:

Խաղաղության մթնոլորտը ստեղծելու առաքելությունը կատականի Եկեղեցիին, այդ պետք է ըլլա անոր սուրբ պարտականությունը:

Այսօրվան աշխարհին, որ կոռուպցիոն անորոշութեն, վախէ և համաշխարհային երրորդ պատերազմի մը սպառնալիքէն, մենք, քրիստոնյաներս, պետք է ցույց տանք սիրո և խաղաղության ճանապարհը, համագործակցության և խաղաղ գոյակցության ճանապարհը: Նույնիսկ խաղաղության գաղափարը, խաղաղ ապրելու և գործելու կյանքի քրիստոնեական ըմբռնում մըն է, գերազանցապես քրիստոնեական: Կարելի է խաղաղության գաղափարը անջատել Քրիստոսի Ավետարանէն:

Հանուն մեր կրոնական հավատքին, հանուն Քրիստոսի Ավետարանին, պետք է պատերազմը հայտարարել օրէնքէ դուրս և բոլոր ճանապարհները փակել անոր առջև:

Ընդդիմառաջ պատերազմին կնշանակէ հպատակի Աստուծոյ կամքին: Մարդկությունը կրնա և պետք է ապրի առանց պատերազմներու: Մենք, քրիստոնյաներս, լեցուն ենք լավատեսությամբ և կիսկատանք, որ աշխարհը պիտի կրնա պահպանել խաղաղությունը և, վերջապէս, իրագործել աստվածային կամքը:

Մենք այս հարգարժան համաժողովին կներկայացնենք ծրագիր-նախագիծ մը, ուղղված քրիստոնյա եկեղեցիներուն և ամբողջ աշխարհի կրոնական հաստատություններուն, հրավիրելով զանոնք մասնակցելու խաղաղության մթնոլորտի ստեղծման գործին:

1. Զարոգել մեր ժողովուրդներուն մեր կենդանի խոսքերով սեր և խաղաղություն, և հավատացալներն ու երիտասարդությունը դաստիարակել այս ոգիով, առանց կրոնական հավատքի, ազգության, ցեղի, ընկերային դիրքի, քաղաքական գաղափարախոսության խտրության:

Պետք է բոլոր մարդիկը դաստիարակել աշխարհի բոլոր մարդոց հանդէպ բարեկամության և եղբայրության ոգիով:

2. Պաշտպանել խաղաղության դատը մեր խղճի ամբողջ ուժով, բոլոր հնարավոր միջոցներով և կազմակերպել մեր աշխատանքը հանուն այս նպատակին, հակադրվելով բոլոր այն ուժերուն, որոնք ժողովուրդները կտանին դեպի պատերազմ:

Պահանջել պինաթափում և ատոմական փորձարկումներու արգիլումը, պաշտպանել ժողովուրդներու և պետություններու խաղաղ գոյակցության սկզբունքը, գտնել միշտ խաղաղ լուծումներ բոլոր միջապագային խնդիրներուն համար:

3. Պաշտպանել ժողովուրդներու ազատ ինքնորոշման և անկախության սկզբունքը ընդդէմ գաղութատիրական ձգտումներու:

4. Պաշտպանել կրոնական և քաղաքական խաղաղությունը, ընկերային արդարությունը և ժողովուրդներու տնտեսական բարեկեցությունը:

5. Այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, կազմակերպել օգնություն այն ժողովուրդներուն, որոնք պետք ունին անոր, տնտեսական, մշակութային, բժշկական տեսակետով, հաշվեհարդարի ենթարկելու համար աղքատությունը և հետամնացությունը մարդկային ընկերության մեջ:

6. Գործոն կերպով մասնակցիլ միջապագային բոլոր ձեռնարկներուն խաղաղության համար և գործակցիլ խաղաղության կողմնակիցներու բոլոր կազմակերպություններուն հետ:

7. Հաստատել միջկրոնական կեդրոն մը, իբրև նպատակ ունենալով վերահիշալ բոլոր աշխատանքներու կազմակերպումը և համակարգումը, միևնույն ոգիով, աշխարհի բոլոր եկեղեցիներուն և կրոններուն համար:

Պետք է կատարել այս բոլորը, ստեղծելու համար խաղաղության նպաստավոր մթնոլորտ մը բոլոր ժողովուրդներու կյանքին մեջ: Այս է մեր գերագույն նպատակը:

Հայաստանայց Առաքելական Եկեղեցին պիտի միացնէ իր ճիգերը, իր զգացումները և իր գործունեությունը բոլոր եկեղեցիներու և կրոններու հետ, իրականացնելու և ամրապնդելու համար մարդկային եղբայրությունն ու համերաշխությունը, որ պիտի ըլլա Կորավոր ազդակ մը աշխարհի վրա խաղաղության տնականացման համար:

Թող բարին Աստուծոյ օրհնությունը տարածվի բոլոր ժողովուրդներուն վրա, որպեսզի արդարությունը և խաղաղությունը իշխեն երկրի վրա ընդմիշտ:

Ամեն»:

Հուլիսի 14-ին, երեկոյան, բոլոր հանձնաժողովներում ավարտվում են աշխատանքները և յուրաքանչյուր խմբակ գրավոր կերպով կոնգրեսի ընդհանուր նիստին է բերում իր եզրակացություններն ու բանաձևերը:

Հուլիսի 14-ին, կոնգրեսի բոլոր կրոնական պատգամավորները, առանձին նիստ գումարելով, խմբագրում են հետևյալ կոչը, ուղղված աշխարհի բոլոր եկեղեցիներին, կրոնական կազմակերպություններին, հավատացյալներին և բարի կամքի բոլոր մարդկանց.

«Շատ սիրելի եղբայրներ՝ ու բուլբներ՝.

Դավանելով տարբեր հավատներ և ոգեշնչված մարդկությանը աշխարհակործան մի պատերազմի սպառնալիքից փրկելու ընդհանուր ցանկությամբ, երկրագնդի բոլոր անկյուններից մենք եկել ենք Հելսինկի, Ֆինլանդիայի մայրաքաղաքը, որտեղ մասնակցեցինք իսաղաղության կողմնակիցների համաշխարհային համաժողովի աշխատանքներին, որը գումարվեց 1965 թվականի հուլիսի 10—15-ին:

Մենք միաձայն եղանք ծառանալու ընդդեմ ամեն բռնության, և ամենից առաջ ընդդեմ եղբայրասպան պատերազմների և ընդդեմ պատերազմների պատրաստության բոլոր ձևերի, որովհետև այդ բոլորը դեմ են Աստուծո կամքին: Առաջնորդված և ներշնչված Նախախնամության կողմից, մենք մեր պարտականությունը համարեցինք կոչ ուղղել ձեզ և բոլոր նրանց, ովքեր հարգում են արժանապատվությունը մարդկային էակի՝ Աստուծո արարածի, որ կանգնել է այսօր անդունդի սեմին, մահվան զենքով բնաջնջման սպառնալիքի առաջ: Մենք այդ բանն անում ենք հանուն այս համաժողովում միավորված հոգևորական անձնավորությունների:

Եղբայրներ՝ և բուլբներ, մենք զգում ենք խորունկ անձկության մի զգացում այն մտքից, որ շարի ոգին կարող էր մի ակնթարթում ավելել, ոչնչացնել, տառապանքների և դժբախտությունների դաշտի վերածել այս երկիրը, որն Արարչի կողմից նախասահմանված է մարդու երջանկության:

Մեր կրոնական պատասխանատվությունը մարդկային ցեղի ճակատագրի և գալիքի մասին, ժամանակակից աշխարհի բազմաթիվ երկրների, դավանանքների և տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների առաջնորդել է այստեղ, միավորելու համար մեր ճիգերը և միանալու բոլոր նրանց, որոնք խաղաղությունը կրում են իրենց սրտերում, որոնք իրենց կյանքը դրել են ի սպաս և ի պահպանումն իր հարեանի երջանկության:

Հանուն Ամենակարողի և մարդկության հանդեպ՝ նրա սիրո, մենք կոչ ենք ուղղում ձեզ՝ լսեցե՛ք մեր ձայնը և կանգնեցե՛ք խիստամուտ թափով՝ վանելու համար աշխարհի կործանման վտանգը:

Հակառակ այն հեռավորություններին, քաղաքական սահմանագծերին և արգելքներին, որոնք բաժանում են մեզ, մենք կարող ենք, ներշնչվելով մեր հոգիների եղբայրությամբ և Աստուծո օգնականությամբ, միանալ հանուն մարդու:

Որոշ հեռավորություններ և կրոնական դարավոր բաժանումներ թեև գոյություն ունեն մեր միջև, բայց, որպես Աստուծո որդիներ, մենք բոլորս էլ եղբայրներ ենք և եկել է ժամը միմյանց բաց անելու մեր բազուկները հանուն նրա, հանուն մեզ շնորհած սիրո իրագործման: Եթե մենք անցնենք՝ անտարբեր մնալով մարդկային տառապանքներին, այն ժամանակ, երբ թափվել է անմեղների արյունը, մեր աղոթքները կլինեն անզոր Աստուծո մոտ, որովհետև մնալով կրավորական և համր, մենք մահացու սուրբ դնում ենք պատերազմին սատարողների ձեռքերի միջև: Ահա ինչու՛, ուղղելով Աստուծո մեր աղոթքները վասն խաղաղության մարդկության, մենք, այս աշխարհի քաղաքացիներս, անում ենք ամեն ինչ, որ գտնվում է մեր իշխանության ներքո, որպեսզի թշնամությունը, ատելությունը և եղբայրասպան կոկիվները ընդմիշտ վտարվեն: Մենք ձեզ կոչ ենք անում ձեռնարկելու գործողությունների, որոնք կարող են նպաստ բերել արյունոտ և ամայացուցիչ մի պատերազմի անմիջական դադարեցմանը վիետնամական հողի վրա և Դոմինիկյան հանրապետության մեջ, ինչպես նաև աշխարհի այլ մասերում, որտեղ ծնունդ են առնում պատերազմի վտանգավոր օջախներ: Մենք կոչ ենք ուղղում ձեզ՝ գիտակցելու մեր մարդկային եղբայրությունը, միավորվելու համար բարի կամքի բոլոր մարդկանց հետ, պաշտպանելու համար յուրաքանչյուր մարդու կյանքի և արժանապատվության իրավունքը:

Մենք շենք կարող ընդունել, որ կատաղի ազգայնամոլությունը և գաղութարարությունը, ցեղային խտրականությունը, ապարտեիդը և հասարակական անարդարությունները քաղաքացիական իրավունք ունենան երկրի վրա:

Մենք պատրաստ ենք միացնելու մեր ջանքերը խաղաղության բոլոր ուժերի և միջազգային կազմակերպությունների ջանքերին, որոնք նպաստում են հաշվհարդարի ենթարկելու անցյալի այս ամոթալի ժառանգությունը:

Բայց համաշխարհային մի տագնապի ստույգ սպառնալիքի առաջ, մեր պարտականությունն է արտահայտվել հօգուտ ատոմական զենքի տարածման արգելքի, դատապարտության և ոչնչացման:

Աստված տիեզերքն ստեղծել է մարդու համար, և հանուն Նրա մենք խնդրում ենք ձեզ ծառայել խաղաղության, մարդկային երջանկության և եղբայրության դատին:

Թո՛ղ հնչեն խաղաղության մեր կոչերը, հետամուտ լինե՛նք մեր գործին Նրա անունով և վերառաքենք մեր աղոթքները, որպեսզի խաղաղությունը ընդմիշտ իշխի երկրի վրա»:

Հուլիսի 14-ին, կեսօրվա ժամը 12-ին, համագումարին մասնակցող եկեղեցական պատվիրակությունները Հելսինկիի լուսերական եպիսկոպոսի կողմից հրավիրվում են մայրաքաղաքի նորակառույց Մայր Եկեղեցում հատուկ գահաբանական արարողության, որին հաջորդում է ընդունելությունի պատիվ հյուրերի: Խոսք է առնում Հելսինկիի եպիսկոպոսը և ողջունում հյուրերին: Պատասխան խոսքով հանդես է գալիս Բուլղարիայի Պատրիարք Նորին Ամենապատվություն Կիրիլ՝ հանուն բոլոր պատվիրակությունների,

Հուլիսի 15-ին կայանում է կոնգրեսի վերջին և եզրափակիչ նիստը:

Ժողովը բացվում է առավոտյան ժամը 9-ին: Ընդհանուր նիստում լսվում են 7 ենթաժողովների եզրակացություններն ու բանաձևերը, որոնցում հանրագումարի են բերված պատգամավորների հայացքները քննարկված հարցերի վերաբերյալ:

2-րդ ենթաժողովը, ուր քննության էր առնված «Դեռևս գաղութային լուծի տակ գտնվող ժողովուրդների ազատագրում, ազգային վեհիրավության պահպանում ընդդեմ ամեն տեսակի ոտնձգության և ժողովուրդների ինքնորոշման իրավունք» թեման, բռնակալությունը, գաղութատիրությունն ու ցեղասպանությունը դատապարտող իր ընդունած ծավալուն և համարձակ բանաձևում մտցրել էր նաև հետևյալ կետը, հայոց եղեռնի 50-ամյակի վերաբերյալ:

«Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործարկված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց կյանքը միլիոն քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի»:

(«This year is the 50-th anniversary of the Armenian massacres perpetrated by Ottoman Turkey aimed at settling the national question through the extermination of a people. This genocide cost the lives of more than one and a half million free-

dom-loving Armenians, or tho-thirds of the Armenian people».)

Այս բանաձևը, մյուս բանաձևերի հետ միասին, հուլիսի 15-ին, ընդհանուր ժողովում ընդունվեց միաձայն և արձանագրվեց կոնգրեսի գրքում, որպես պաշտոնական փաստաթուղթ:

Հանձնաժողովների եզրակացությունների հաստատումից հետո, ընդհանուր ժողովում քննվեցին երկու փաստաթղթեր ևս՝ բանաձև վիետնամի մասին և ընդհանուր հայտարարություն կամ որոշում, որի մեջ ասվում էր.

«Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողովը գումարվեց Հելսինկիում 1965 թվականի հուլիսի 10-ից 15-ին: Համաժողովը միավորեց 1470 մասնակից, որոնք ներկայացնում են բոլոր ցամաքամասերի 98 երկրների ժողովրդական կազմակերպություններ և 17 միջազգային կազմակերպություններ:

Համաժողովին ներկայացված հարցերը յոթը հանձնաժողովներում առարկա դարձան. կոնկրետ և խորացված քննության. օժանդակություն վիետնամի ժողովրդին անկախության, միության և խաղաղության համար նրա արդար դատի մեջ. ազատագրություն գաղութային տիրակալության ենթակա ժողովուրդների. պահպանում ազգային վեհիրավության. պայքար ընդդեմ ցեղային խտրականության (ապարտեիդի), ցեղապաշտության (ռասիզմի) և մարդու իրավունքների բռնաբարման. զինաթափում, վերացում համաշխարհային երկրորդ պատերազմի հետքերի և եվրոպական անվտանգություն. ազգերի տնտեսական վեհիրավություն. զինարշավի տնտեսական և սոցիալական հետևանքները. պատերազմական արդյունաբերության վերափոխումը խաղաղության արդյունաբերության. ստեղծում խաղաղության նպաստավոր մթնոլորտի, խաղաղության կազմակերպությունների համագործակցություն, ՄԱԿ-ի հարցեր:

Յուրաքանչյուր հանձնաժողովի աշխատանքները ամփոփված են այն ղեկուցագրերի մեջ, որ նրանք հաստատել են և որոնք ներկայացվել են համաժողովին»:

Համաժողովը կոչ է անում բոլոր ժողովուրդներին՝ պահանջել իրենց կառավարություններից՝ չեզոքացնել իմպերիալիզմը և կանգնեցնել նրա հարձակումը, նեցուկ կանգնել գաղութատիրության դեմ պայքարի մեջ գտնվող ժողովուրդներին և ազգային անկախության հաղթանակին, նեցուկ կանգնել ժո-

դոլորդների պայքարին իրենց իրական անկախության, իրենց ազատության և իրենց տնտեսական ու հասարակական զարգացման համար, ընդդեմ նոր-գաղութատիրության և շահագործման: Համաժողովը կոչ է անում բոլոր ժողովուրդներին գործել՝ վերջ տալու համար զինարշավին և հասնելու զինաթափման գործնական միջոցառումների, պահանջել զինվորական խարխախների հաշվհարգարը և օտար երկրամասերում բանակած զորքերի դուրսբերումը, շոշափելի միջոցառումներ աշխարհի անվտանգության և վեճի առարկա եղող հարցերի խաղաղ կարգավորման համար:

Ժողովուրդների միությունը և ուժը՝ խաղաղությունը փրկելու համար իրենց ձեռնարկի մեջ է:

Ընդդիմադրության և պատերազմի ուժերը չեն անցնի ժողովուրդների վճռականության և նրանց հասարակաց պայքարի առաջ»:

Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համագումարը Հելսինկիում իր աշխատանքներն ավարտում է հուլիսի 15-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 9-ին: Ընտրվում են Խաղաղության համաշխարհային խորհրդի նախագահություն, գործադիր բյուրո, որը գործելու է 6 ամիս՝ մինչև նոր նախագահի ընտրությունը: Պրոֆ. Զոն Բեռնալը, ծերու-

թյան հետևանքով, հրաժարվում է նախագահի պաշտոնից:

Հուլիսի 16-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Հելսինկիի տեսարժան վայրեր, պատմական հուշարձաններ և եկեղեցիներ:

Ֆինլանդիան, 60 000 կղզիների այդ շքնաղ երկիրը, ունի 337 009 քառակուսի կիլոմետր տարածություն, 4 600 000 բնակչություն: Ֆինների 93,1 տոկոսը լութերական բողոքականներ են:

Ֆինները Ֆինլանդիա են գաղթել քրիստոնեական թվականության սկզբներին:

Ֆինների հիմնական զբաղմունքը երկրագործությունն է, փայտի և թղթի արդյունաբերությունը, ձկնորսությունը:

Ֆիննական լեզվով առաջին հրատարակությունը եղել է ԺՁ դարում: 1640 թվականին բացվել է ֆիննական առաջին համալսարանը Տուրկու նախկին մայրաքաղաքում:

1917 թվականի դեկտեմբերից Ֆինլանդիան սահմանադրական հանրապետություն է: Երկրի քաղաքական բարձրագույն իշխանությունը մարմնավորվում է հանրապետության նախագահի իշխանության մեջ:

Ֆինլանդիայի արդի մայրաքաղաքն է Հելսինկին, կես միլիոն բնակչությամբ:

Հուլիսի 17-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը մեկնում է Մոսկվա, իր շքախմբի անդամների հետ, և 21-ին ժամանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

